



Պեյրութ, 28 Յուլիս 2022

Յարգարժան վշտակից անդամներ ՀԲԸՄ-ի Գահիրէի Շրջանակային վարչութեան եւ համայն սգակիրներ,

Խոր ցաւով իմացանք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Գահիրէի ատենապետ, հասարակական գործիչ, հրապարակախօս, մտաւորական տոքթ. Վիգէն Ճիգմեճեանի անժամանակ, յանկարծակի եւ անողորմ մահը:

Դառնօրէն կը սգանք, որովհետեւ այնքա՛ն շուտ հեռացաւ, այնքա՛ն շատ բան տակաւին կրնար կատարել, որովհետեւ տակաւին շատ երազանքներ եւ տեսիլքներ մնացին անաւարտ:

Մեր բոլորին համար անմոռանալի պիտի մնայ անոր անսպառ եռանդը, միշտ կենսախիւնդ կերպարը, խանդավառ ջերմութիւնը, շրջապատին հանդէպ անոր սիրալիր վերաբերմունքը:

Հիմա այս խորհրդաւոր պահուն կրնանք անվարան հաստատում մը կատարել՝ անգնահատելի պիտի մնայ տոքթ. Վիգէն Ճիգմեճեանի ներդրումը ՀԲԸՄ-ի ընտանիքին եւ յատկապէ՛ս ՀԲԸՄ-ի Եգիպտոսի պատմութեան մէջ:

Յանուն Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան Կեդրոնական Վարչութեան կը ցաւակցինք Եգիպտոսի շրջանի մեր բոլոր միութենականներուն, հանգուցեալին տիկնոջ՝ Ալինին, անոր երկու դուստրերուն եւ համայն ՀՄԸՄ-Նուպարականներուն:

Ի խորոց սրտէ կ'աղօթենք սիրելի տոքթ. Վիգէն Ճիգմեճեանի հոգու խաղաղութեան ու փրկութեան համար:

Խորին ավստասանքով մեր գլուխները կը խոնարհենք անոր արդար եւ երախտաշատ վաստակին առջեւ:

Տոքթ. Վիգէն Ճիգմեճեանի յիշատակը վառ պիտի մնայ բոլոր ՀԲԸՄ-ականներու եւ ՀՄԸՄ-Նուպարականներու սրտին մէջ:

Աստուած խաղաղութիւն պարգեւէ անոր:

ՀԵԸ-ի Կեդրոնական Վարչութեան

Ատենադպիր

Յակոբ Թելվիզեան



Ատենապետ

Վիգէն Չերչեան